Լուսինե
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2002 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ: 2013 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2016 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2010 թ.-ից ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության (այժմ՝ բիզնես վարչարարության) ամբիոնի դոցենտ է: Դասավանդել է Միշկոլցի, Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի, Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարաններում («Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագիր): 2019 թ.-ից «Սոցիալական ապահովություն և ապահովագրություն» նեպալյան ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Հեղինակ և համահեղինակ է շուրջ երեք տասնյակ գիտական հոդվածների, կոլեկտիվ մենագրությունների, զեկույցների:

https://orcid.org/0000-0002-3894-4803

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՏԽՈՒՐ «ԴԻՄԱՆԿԱՐԸ». ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶՐԿԱՆՔՆԵՐ, ԹԵ ԵՐԱՁԱՆՔԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-86

Հիմնաբառեր. *մանկական աղքատություն, զրկանքներ, ծայրահեղ աղքատություն, կենսապայմաններ*

Մանկական աղքատության հիմնախնդիրը մշտնջենական է, և առայսօր աշխարհում չկա գեթ մեկ երկիր, որը կկարողանա արձանագրել, որ լուծել է կարևորագույն, ամենախոցելի և ամենացավալի մարտահրավերներից մեկը՝ մանկական աղքատությունը: Անհերքելի է՝ որքան կատարյալ է անցնում մանկությունը, համապատասխան միջավայրում է ծնվում և զարգանում երեխան, այնքան առողջ, կրթված և զարգացած հասարակություն է ունենում երկիրը, ինչն էլ տնտեսության ծաղկման, ինչպես նաև ազգային անվտանգության ամենակարևոր գրավականն է:

ՀՀ-ում դեռևս շարունակում է բարձր մնալ մանկական աղքատության մակարդակը, և նույնիսկ չի նշմարվում, թե երբ կարձանագրվի դրա նշանակալի նվազում: Հանրապետության սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ համապատկերին ավելացել են նաև COVID-19 համավարակի և արցախյան պատերազմի բացասական հետևանքները: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020 թ.-ին մեր երկրում յուրաքանչյուր երրորդ երեխան եղել է աղքատ:

Հոդվածը մանկական աղքատության հիմնախնդրի, դրա առաջացման պատճառների ու չափման մեթոդների, արտասահմանյան մի շարք երկրներում այդ երևույթի կրճատման ուղղությամբ իրականացվող միջոցառումների, ինչպես նաև ՀՀ-ում դրա մակարդակի վերլուծության մասին է:

Աշխարհի երկրների մեծամասնությունում երեխաների իրավունքները, սովորաբար, հազվադեպ են հայտնվում քաղաքական օրակարգե-

ռում, ինչը նշանակում է, որ նրանց կարիքները, որպես համապարփակ քաղաքականության առարկա, չեն դիտարկվում: Երեխայի բարեկեցությունը, ընդհանուր առմամբ, դիտվում է սոցիալական քաղաքականության որոշակի ուղղություններում՝ իբրև զբաղվածության, կրթության, առողջապահության, սոցիալական աջակցության երկրորդական արդյունք:

Պետք է նշել, որ աղքատության մեջ մեծացող երեխաները հաճախ ունենում են սննդի, հիգիենայի պարագաների, կացարանի, առողջապահության, կրթության, մշակութային, սպորտային ծառայությունների պակաս, և նրանց համար անհոգ մանկությունը վերածվում է զրկանքներով լի փորձության: Մանկական աղքատությունը կարելի է սահմանել որպես անապահով ընտանիքներում ապրող երեխաների կենսապայմաններ, երբ նրանք մեծանում են գոյության համար անհրաժեշտ սուղ միջոցներով[1]:

Մանկական աղքատությունը, որպես կանոն, հայեցակարգված է կա՛մ նյութական (դրամական), կա՛մ բազմաչափ առումներով: Նյութական աղքատության սահմանումը կապված է եկամուտների կամ ծախսերի հետ, իսկ բազմաչափը ենթադրում է ընտրության և հնարավորությունների բացառում՝ ռեսուրսների բացակայության պատճառով, ինչը հանգեցնում է սոցիալական մեկուսացման[2]:

Աղքատության վերաբերյալ ավելի լայն, ոչ ակադեմիական (այդ թվում՝ իրավական և քաղաքական գրականության մեջ և՛ երեխաների, և՛ չափահասների համար) հասկացությունները/սահմանումները և չափումները շատ հաճախ տարակարծությունների տեղիք են տալիս:

Մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ հանդիպում են եկամուտների վրա հիմնված աղքատության չափման/գնահատման մոտեցումներ: Այնուամենայնիվ, երեխաների իրավունքների տեսանկյունից, միայն այս մոտեցման վրա հիմնվելը խնդրահարույց է:

Նախ, երեխաները հաճախ «անտեսանելի» են, երբ աղքատությունը սահմանվում և չափվում է դրամական արտահայտությամբ՝ քողարկվելով ընտանիքի կամ տնային տնտեսության վրա կենտրոնացվածությամբ: Երկրորդ, տնային տնտեսությունների վրա հիմնված եկամուտների չափումները ենթադրում են ռեսուրսների հավասար բաշխում տնային տնտեսության ներսում, սակայն դրանք կարող են տարբեր կերպ բաշխվել մեծահասակների և երեխաների միջև: Բացի այդ, թեև եկա-

[1] https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r)U8oxWRdeIa1oKk0m0NP7NBQZJkks8n90SYu8aQsbBBT6IuA_u8W_40

[2] A. Nolan, K. Pells, Children's Economic and Social Rights and Child Poverty: The State of Play, https://brill.com/view/journals/chil/28/1/article-p111_111.xml?language=en



Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2002 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Աշխատանքի տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2010 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2003-2005 թթ. եղել է Հենրիխ Բյոլի հիմնադրամի՝ «Աջակցություն երիտասարդ գիտնականներին» ծրագրի շահառու, 2014 թ.-ին վեցամսյա ուսումնառություն է անցել ԱՄՆ-ի Թաֆթսի համալսարանում՝ իրավունքի և դիվանագիտության Ֆլեթչերի դպրոցում: 2002 թ.-ից աշխատում է ՀՀ վիճակագրական կոմիտեում, ներկայում՝ որպես ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ: Վերապատրաստվել է բազմաթիվ երկրների վիճակագրական ծառայություններում և միջազգային հեղինակավոր կազմակերպություններում: Հեղինակ է 6 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0002-2592-3421

մուտը կարևոր է, սակայն չպետք է մոռանալ, որ կան ծառայություններ (ջրի, առողջապահական, կրթության, սննդի, տրանսպորտի և այլն), որոնց անհասանելիությունը, ավելի, քան դրամական աղքատությունը, կարող է անմիջականորեն ազդել երեխաների վրա:

Բազմաչափ աղքատության տեսանկյունից, մանկական աղքատություն կարող է գոյություն ունենալ նույնիսկ այն իրավիճակներում, երբ ծնողները խնայել են ֆինանսական միջոցներ, բայց երեխաները չունեն կրթության, տրանսպորտի կամ մաքուր ջրի հասանելիություն: Առանց վերջիններիս՝ երեխաների կարիքները չեն բավարարվում, և հետևաբար՝ նրանց իրավունքները չեն իրացվում: Մյուս կողմից՝ մանկական աղքատություն կարող է գոյություն չունենալ այն ընտանիքներում, որտեղ ծնողները գործազուրկ են, սակայն ստանում են սոցիալական օժանդակություն, և երեխաներն ունեն մաքուր ջրի, սանիտարական պայմանների, առողջ սննդի, կրթության և այլ ծառայությունների հնարավորություն[3]:

Այսպիսով՝ մանկական աղքատության չափման/գնահատման մոտեցումները բազմազան են:

Մանկական աղքատության համընդհանրական դիմագիծը: Մանկական աղքատությունն ազդում է աշխարհի երեխաների մոտ 50%-ի վրա կամ մոտավորապես 1.1 միլիարդ երեխա ամբողջ աշխարհում ապրում է աղքատության մեջ[4]: 2020 թ.-ի սեպտեմբերի տվյալներով՝ բազմաչափ աղքատ երեխաների թիվն ավելացել է գրեթե 150 մլն-ով՝ պայմանավորված COVID-19 համավարակի հետևանքներով: Ըստ տարբեր գնահատականների՝ գրեթե 356 մլն երեխա ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում՝ կենսապահովման համար ունենալով օրական 1.90 ԱՄՆ դոլարից պակաս միջոց[5]: Համաձայն ՄԱԿ-ի կանխատեսումների՝ մոտ ապագայում համաշխարհային աղքատությունը կմնա ռեկորդային բարձր մակարդակում:

Տնտեսական աճի և զբաղվածության վրա համավարակի անբարենպաստ ազդեցությունների հետևանքով զգալիորեն խաթարվել է համաշխարհային աղքատության կրճատման առաջընթացը՝ մարելով ծայրահեղ աղքատության վերացման հույսերը: Թեև 2022 թ.-ին, 2021 թ.-ի համեմատ, աշխարհում կանխատեսվում է ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թվաքանակի փոքր-ինչ նվազում, այնուամենայնիվ, ակնկալվում է, որ այդ ցուցանիշը կլինի շատ ավելի բարձր, քան մինչ համավարակը[6]:

Ըստ Համաշխարհային բանկի 2021 թ. զեկույցի նախնական վերլուծության՝ COVID-19 համավարակը կարող է հանգեցնել «կրթական աղքատության» մակարդակի բարձրացմանը. ցածր և միջին եկամտով երկրներում 10 տարեկան երեխաների մասնաբաժինը, որոնք նույնիսկ տարրական տեքստեր չեն կարողանում կարդալ, հասնում է մինչև 70%-ի: Նման աճը պայմանավորված է դպրոցների երկարատև փակմամբ (200-250 օրով) և ուսումնառության վատ արդյունքներով: Ըստ Դեյվիդ Մալպասի (Համաշխարհային բանկի խմբի նախագահ)՝ COVID-19 համավարակը պատճառ է դարձել մարդկային կապիտալի ամենամեծ կորստի և մեկ դարի ընթացքում հանգեցրել կրթության ամենավատ ճգնաժամին: Մալպասը նշել է, որ երկրները դպրոցների փակման բացասական հետևանքները դեռ կշարունակեն զգալ տասնամյակներ շարունակ[7]:

Մանկական աղքատության «ճիրաններից» զերծ չեն մնացել նաև եվրոպական զարգացած երկրները: 2010-2019 թթ.-ին երեխաների աղքատության (կամ սոցիալական բացառման) ռիսկը ԵՄ անդամ 27 երկրում կրճատվել էր 4.8 տոկոսային կե-

[3] A. Nolan, K. Pells, Children's Economic and Social Rights and Child Poverty: The State of Play, https://brill.com/view/journals/chil/28/1/article-p111_111.xml?language=en
[4] https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/
[5] https://www.unicef.org/social-policy/child-poverty
[6] WORLD ECONOMIC SITUATION AND PROSPECTS 2022, p. 9, https://news.un.org/en/story/2022/01/1109702
[7] World Bank: Pandemic Threatens to Drive Unprecedented Number of Children into Learning Poverty,October 29, https://www.worldbank.org/en/news/press-release/2021/10/29/world-bank-pandemic-threatens-to-drive-unprecedented-number-of-children-into-learning-poverty



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Մանկական աղքատության մակարդակը ԵՄ անդամ երկրներում 2020 թ.-ին (%)[8]

տով՝ 27.3%-ից հասնելով մինչև 22.5%-ի, սակայն 2020 թվականին դա աճել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 24.2%:

2020 թ.-ին ԵՄ-ում մանկական աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Ռումինիայում՝ 41.5%, որին հաջորդում է Բուլղարիան՝ 36.2%, իսկ ամենացածր ցուցանիշները՝ Սլովենիայում՝ 12.1%, Չեխիայում՝ 12.9% և Դանիայում՝ 13.5% (գծապատկեր 1): Հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկայում մարդիկ շատ ավելի աղքատ են, քան 2009 թ.-ի տնտեսական ճգնաժամից առաջ[9]: Ուստի կարելի է եզրակացնել, որ սոցիալական համակարգերը ձախողել են մանկական աղքատության կրճատման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

Եվրոպական երկրները, մտահոգված լինելով և հասկանալով մանկական աղքատության կործանարար հետևանքները, ստեղծել են Eurochild-ը: Սա 34 եվրոպական երկրների 171 կազմակերպության և անհատների ցանց է, որն աշխատում է Եվրոպայի երեխաների համար՝ ձգտելով ձևավորել այնպիսի հասարակություն, որտեղ վերջիններիս իրավունքներն իրացված կլինեն: Ցանցի աշխատանքը հիմնված է «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի համաձայնագրի դրույթների ապահովման վրա՝ ստեղծելով երեխաների և երիտասարդների իրավունքների համապարփակ փաթեթ[10]: Eurochild-ի նպատակն է դրական փոփոխություններ կատարել մասնավորապես աղքատությունից և խտրականությունից տուժած, ռիսկային խմբում կամ դրա սահմանին գտնվող և/կամ այլ խոցելի խմբերում հայտնված երեխաների (միգրանտների և փախստականների երեխաներ) համար[11]:

Բացի այդ, ԵՄ անդամ երկրներում գործում է «Երեխայի երաշխիքը», ըստ որի՝ ինտեգրված մոտեցում է ցուցաբերվում մանկական բազմաչափ աղքատության խնդիրների լուծմանը՝ բոլոր երեխաների համար ապահովելով անվճար առողջապահական ծառայությունների, կրթության, խնամքի, արժանավայել բնակարանային պայմանների և համապատասխան սննդի հասանելիություն[12]:

ԵՄ անդամ յուրաքանչյուր երկիր նաև

[8] Կազմել են հեղինակները՝ ըստ հետևյալ աղբյուրի·https://ec·europa·eu/eurostat/statistics-explained/index·php?title=Children_at_risk_of_poverty_or_social_exclusion
[9] Eurochild's Strategic Plan 2019-2021, https://eurochild.org/uploads/2020/11/Strategic-Plan-2019-2021-online-low-res_compressed.pdf, p. 14.
[10] Նույն տեղում, էջ 5
[11] Նույն տեղում, էջ 9:
[12] Recent Trends in Child and Family Policy in the EU, European Platform for Investing in Children: Annual thematic report 2019, p. 8, https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/99fcd15b-73ec-11ea-a07e-01aa75ed71a1/language-en

մշակել է մանկական աղքատության կրճատման սեփական միջոցառումների ցանկ:

Այսպես՝ Իռլանդիայի կառավարությունը 2017 թ.-ին հրապարակել է մանկական աղքատության դեմ պայքարի վերաբերյալ փաստաթուղթ, որտեղ ընդգծել է նշված հիմնախնդրի հաղթահարման համակցված մոտեցման անհրաժեշտությունը՝ ներառելով և՛ եկամտային, և՛ ծառայությունների աջակցություն: Ըստ այդմ՝ բոլոր երեխաների համար նախատեսվում է անվճար բժշկական ծառայություն, խնամքի տրամադրում, կրթության ծախսերի կրճատում՝ բոլոր մակարդակներում, ինչպես նաև համապատասխան կացարանի ապահովում: Բացի այդ, կարևորվում է նաև ծնողներին աջակցությունը՝ աշխատանքի շուկա մուտք գործելու, աշխատանք գտնելու և դա պահպանելու, աշխատաշուկայում առաջընթաց ունենալու և այլ առումներով: Նույն ժամանակահատվածում Իսպանիայի կառավարությունը 3 տարեկանից ցածր այն երեխաների մայրերի համար, որոնք ունեն լրիվ դրույքով զբաղվածություն, ներդրել է նոր հարկային նվազեցում՝ երեխաների խնամքի ծախսերը հոգալու նպատակով, իսկ Դանիայի կառավարությունը մեկնարկել է «1000 օր» ծրագիրը՝ ուղղված հատկապես խոցելի ընտանիքների երեխաների աջակցմանը[13]:

Մեծ Բրիտանիայում 2019-2020 թթ.-ին 10 երեխայից 3-ը եղել է աղքատ (4.3 միլիոն երեխա): Աղքատության մակարդակը բարձր է երեխաներ ունեցող միայնակ ծնողներով ընտանիքների շրջանում: Այսպես՝ միայնակ ծնողների պարագայում աղքատ են համարվել երեխաների 49%-ը: Երեխաների՝ աղքատության պայմաններում ապրելու հավանականությունն առավել բարձր է սևամորթ և էթնիկ փոքրամասնությունների պարագայում: Նշված խմբերում աղքատ է երեխաների 46%-ը, մինչդեռ բնիկ բրիտանական ընտանիքների դեպքում այդ ցուցանիշը 26% է[14]:

Ըստ 2019 թ.-ի տվյալների՝ ԱՄՆ-ում մանկական աղքատության մակարդակը եղել է 14.4%, ընդ որում, ավելի աղքատ են համարվել սևամորթ և իսպանախոս երեխաները (գծապատկեր 2):

Այսպիսով՝ ԱՄՆ-ում յուրաքանչյուր 7 երեխայից 1-ը համարվում է աղքատ: Բացի այդ, մանկական աղքատության մակարդակը տարբերակվում է ըստ երեխաների տարիքային խմբերի: Օրինակ՝ 2019 թ.-ին մինչև 5 տարեկան երեխաների աղքա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ԱՄՆ-ում մանկական աղքատության մակարդակն ըստ ռասայի և էթնիկ պատկանելության, 2019 թ. (%)[15]

[13] Նույն տեղում:
[14] https://www.childrenssociety.org.uk/what-we-do/our-work/ending-child-poverty
[15] Կազմել են հեղինակները՝ ըստ հետևյալ աղբյուրի. https://www.americanprogress.org/article/basic-facts-children-poverty/

տության մակարդակը կազմել է 15.5%, 6-11 տարիքային խմբինը՝ 14.9%, իսկ 12-17 տարիքային խմբինը՝ 12.9%[16]: Մանկական աղքատությունը տարբերվում է նաև ըստ տնային տնտեսության կազմի: Դիտարկվող ժամանակահատվածի տվյալների համաձայն՝ աղքատ է եղել առանց ամուսնու տնային տնտեսության երեխաների 36.4%-ը, մինչդեռ լիարժեք ընտանիքների դեպքում՝ 6.4%-ը: ԱՄՆ-ում, որպես մանկական աղքատության հիմնական պատճառներ, մատնանշվում են երեխաների խնամքի բարձր ծախսերը, աշխատատեղի կորուստը, ամուսնալուծությունը, հաշմանդամ դառնալը[17]:

Միջազգային փորձի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ համաշխարհային ցնցումների հետևանքով մանկական աղքատության խնդիրն աշխարհում էլ ավելի է խորանում՝ չշրջանցելով նույնիսկ տնտեսապես զարգացած երկրներին:

Մանկական աղքատության մակարդակը ՀՀ-ում: 2020 թ.-ի տվյալների համաձայն՝ ՀՀ-ում աղքատ է եղել աղջիկների 34.3%-ը և տղաների 33.6%-ը, իսկ ծայրահեղ աղքատ՝ աղջիկների 1.3%-ը և տղաների 0.8%-ը: Ուշագրավ է, որ 2020 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, մանկական աղքատության ցուցանիշները գրեթե չեն փոխվել[18]: 2008-2018 թթ.-ի ժամանակահատվածում մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2011 թ.-ին՝ 41.9% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ ՀՀ-ն, կրելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, գրանցել է մանկական աղքատության աճ. 2009 թ.-ին, 2008 թ.-ի համեմատ, երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակն աճել է 2.4 անգամ և միայն 10 տարի անց՝ 2018 թ.-ին, 2008 թ.-ի նկատմամբ այդ ցուցանիշն անկում է ապրել 0.1 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է մանկական աղքատության ընդհանուր մակարդակին, ապա 2018 թ.-ին, 2008 թ.-ի համեմատ, գրանցվել է 0.6 տոկոսային կետով անկում՝ կազմելով 29.2%: Համեմատության համար նշենք, որ 2018 թ.-ին ծայրահեղ աղքատ և աղքատ էր հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.0%-ը և 23.5%-ը[20]: Հետևաբար՝ կարող ենք արձանագրել, որ մանկական աղքատության մակարդակն ինչպես աշխարհի մնացած երկրներում, մեզանում նույնպես բարձր էր բնակչության ընդհանուր աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակներից:

2020 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, մանկական աղքատության ընդհանուր մակարդակն աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 33.9% (ըստ միջին գծի), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ նվազել 1.3 տոկոսային կետով՝ կազմելով 1%:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ-ում մանկական աղքատության ցուցանիշների շարժընթացը 2008-2018 թթ.-ին*, 2019-2020 թթ.-ին(%)[19]**

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (վերին գիծ)
2008 թ.	1.6	29.8
2009 թ.	3.8	35.7
2010 թ.	3.7	41.4
2011 թ.	4.7	41.9
2012 թ.	3.3	36.2
2013 թ.	3.3	37.3
2014 թ.	3.3	34.0
2015 թ.	2.5	33.7
2016 թ.	2.0	34.2
2017 թ.	2.1	30.8
2018 թ.	1.5	29.2
2019 թ.**	2.3	33.6
2020 թ. **	1.0	33.9

[16] https://www.americanprogress.org/article/basic-facts-children-poverty/

[17] Նույն տեղում:

[18] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ՎԿ, Եր., 2021, https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf, էջ 67:

[19] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ՎԿ, Եր., 2020, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf, էջ 61:
*Համադրելիություն ապահովելու նկատառումով 2008 թ.-ի ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 2009 թ.-ին կիրառված մեթոդաբանության:
**Ցուցանիշները հաշվարկվել են ՏՏԿԱՀ 2019 թ.-ի հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ:

[20] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ՎԿ, Եր., 2020, https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 100:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Մանկական աղքատության մակարդակները ք. Երևանում և մարզերում, 2019-2020 թթ., (%)[21]

	2019 թ.			2020 թ.		
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
Երևան	2	17.9	82.1	0	25.9	74.1
Արագածոտն	14.8	54.5	45.5	4.2	40.1	59.9
Արարատ	0.6	35.4	64.6	0	37.9	62.1
Արմավիր	1.5	27.3	72.7	2.2	36.2	63.8
Գեղարքունիք	4.2	49.3	50.7	2.6	56	44
Լոռի	1.8	41	59	0.3	21.6	78.4
Կոտայք	0.8	38.4	61.6	0	21.1	78.9
Շիրակ	3.4	64.8	35.2	3.1	57.7	42.3
Սյունիք	0	16.4	83.6	0	9.3	90.7
Վայոց ձոր	0	24.3	75.7	0	28	72
Տավուշ	1.4	35.4	64.6	1.5	46.1	53.9
Ընդհանուր	2.3	33.6	66.4	1	33.9	66.1

Սակայն, պետք է նշել, որ 2019-2020 թթ.-ի ցուցանիշները համադրելի չեն նախորդ ժամանակահատվածների ցուցանիշների հետ: Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է նաև ՀՀ մարզերում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2019 թ.-ին մանկական աղքատության ամենաբարձր մակարդակն, ինչպես նախորդ տարիներին, արձանագրվել է Շիրակի՝ 64.8% (գրեթե 2 անգամ բարձր է միջին մակարդակից) և Արագածոտնի (հանրապետական միջինը գերազանցել է 1.6 անգամ) մարզերում, իսկ ամենացածրը՝ Սյունիքում՝ 16.4%: 2020 թ.-ին Շիրակի մարզում մանկական աղքատության մակարդակը նվազել է 7.1 տոկոսային կետով՝ կազմելով 57.7%: Այսինքն՝ Շիրակի մարզում յուրաքանչյուր երկրորդ երեխան համարվել է աղքատ: 2020 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, մանկական աղքատության մակարդակն աճել է նաև Գեղարքունիքի մարզում՝ 6.7 տոկոսային կետով: Ի տարբերություն Շիրակի մարզի, Երևանում աղքատ է եղել յուրաքանչյուր 4-րդ երեխան: Մանկական աղքատության ամենացածր մակարդակն արձանագրվել է Սյունիքի մարզում (աղքատ է եղել յուրաքանչյուր 11-րդ երեխան): Բացի այդ, վերոնշյալ ցուցանիշի նվազում է տեղի ունեցել Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերում: ապա ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Արագածոտնի (4.2%) և Շիրակի (3.1%) մարզերում: 2020 թ. տվյալների համաձայն՝ մանկական ծայրահեղ աղքատության զրոյական մակարդակ է արձանագրվել Երևանում, Արարատի, Կոտայքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:

Այսպիսով՝ տվյալների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Երևանի և ՀՀ մարզերի դեպքում մանկական աղքատության ցուցանիշները չափազանց տարբերակված են:

Մանկական աղքատությունն իր հետ ծնում է նաև մի շարք ֆիզիոլոգիական և հոգեբանական խնդիրներ. քաղցի զգացում, ծաղրի առարկա դառնալու վախ (թեկուզև հին հագուստ կրելու համար), մի շարք միջոցառումներից բացակայություն...

Միաժամանակ, նման երեխաները ստիպված են վաղ տարիքից աշխատել, որպեսզի կարողանան կենտրոնանալ իրենց ապագայի վրա[22]: Ընդհանուր առմամբ, մանկական աղքատությունը ծագում և սրվում է պատերազմներից, բնական աղետներից, ընտանիքի քայքայումից, սննդի, մաքուր ջրի, կրթական, առող-

[21] Կազմված է ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի տվյալների:
[22] https://www.childrenssociety.org.uk/what-we-do/our-work/ending-child-poverty

ջապահական, սոցիալական պաշտպանության համակարգերի, զբաղվածության հնարավորությունների պակասից, ավանդական մշակույթի կորստից, համաշխարհային տնտեսական ճգնաժամերից, հաշմանդամությունից, խտրականությունից և այլ գործոնների ազդեցությունից[23]: Այն կարող է կրճատվել պատշաճ կրթության և վերապատրաստման, աշխատանքի ապահովման, առողջապահության, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, պարենային ռեսուրսների հավասար բաշխման, սոցիալական աջակցության արդյունավետ ծրագրերի և այլ համակարգային միջոցառումների շնորհիվ[24]:

ՀՀ կառավարության հնգամյա միջոցառումների ծրագրով (2021-2026 թթ.) սահմանվել են աղքատության կրճատման գործողություններ, սակայն պետք է նշել, որ մանկական աղքատության մասին, որպես այդպիսին, որևէ առանձին ձևակերպում չկա:

Մեր համոզմամբ՝ յուրաքանչյուր երկրի ապագան այն առողջ սերունդն է (և ֆիզիկապես, և մտավոր), որն իր արժեհամակարգով, գիտելիքով, հմտություններով և կարողություններով պետք է դառնա հայրենիքի համար արժեք ստեղծող ուժ: Սակայն, դա տեղի կունենա միայն այն դեպքում, եթե պետությունը, կազմակերպություններն ու անհատները կամք դրսևորեն և սկսեն իրականացնել իրական միջոցառումներ՝ տուրք չտալով այն կաղապարված մոտեցմանը, թե երկիրն աղքատ է, իսկ ֆինանսական միջոցները՝ սուղ: Կարծում ենք՝ այս առումով, գաղափարային բարեփոխումների խիստ անհրաժեշտություն կա, իսկ միջոցների հայթայթումը կլինի դրա ինքնաբուխ և շղթայական շարունակությունը:

ՀՀ-ում մանկական աղքատության դեմ պայքարը պետք է դառնա ազգային և քաղաքական առաջնահերթություն, որպեսզի կյանքի կոչվեն արդեն իսկ հաստատված ծրագրերն ու մեր երկրում վերանա կամ առնվազն աղոտ կերպով նշմարվի մանկական աղքատության տխուր «դիմանկարը»:

[23] https://www.childfund.org.au/stories/causes-child-poverty/?fbclid=IwAR3deDKWUnAz4I4cUfQ3TStNwtfsrfEc3HzybIOL-3hhr2T7x26Yo12DcG5Y

[24] Առավել մանրամասն տես Լ. Կարապետյան, Լ. Պետրոսյան, Մանկական աղքատության հիմնախնդիրները և դրանց դրսևորումները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2021, N3, էջ 74-97:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Լ., Պետրոսյան Լ., Մանկական աղքատության հիմնախնդիրները և դրանց դրսևորումները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2021, N3, էջ 74-97:
2. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ՎԿ, Եր., 2021, https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2.pdf, էջ 67:
3. Nolan A., Pells K., Children's Economic and Social Rights and Child Poverty: The State of Play, https://brill.com/view/journals/chil/28/1/article-p111_111.xml?language=en
4. Eurochild's Strategic Plan 2019-2021, p. 14. https://eurochild.org/uploads/2020/11/Strategic-Plan-2019-2021-online-low-res_compressed.pdf
5. Recent Trends in Child and Family Policy in the EU, European Platform for Investing in Children: Annual thematic report 2019, p. 8, https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/99fcd15b-73ec-11ea-a07e-01aa75ed71a1/language-en
6. World Bank: Pandemic Threatens to Drive Unprecedented Number of Children into Learning Poverty, 2021 October 29, https://www.worldbank.org/en/news/press-release/2021/10/29/world-bank-pandemic-threatens-to-drive-unprecedented-number-of-children-into-learning-poverty
7. WORLD ECONOMIC SITUATION AND PROSPECTS 2022, p. 9, https://news.un.org/en/story/2022/01/1109702
8. https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/?fbclid=IwAR08r)U8oxWRdela1oKk0m0NP7NBQZJkks8n90SYu-8aQsbBBT6IuA_u8W_40
9. https://canadianfeedthechildren.ca/the-feed/child-poverty-causes-and-effects/
10. https://www.unicef.org/social-policy/child-poverty
11. https://www.childrenssociety.org.uk/what-we-do/

our-work/ending-child-poverty
12. https://www.americanprogress.org/article/basic-facts-children-poverty/
13. https://www.childfund.org.au/stories/causes-child-poverty/?fbclid=IwAR3deDKWUnAz4I-4cUfQ3TStNwtfsrfEc3HzybIOL3hhr2T7x26Yo12Dc-G5Y

Лусине КАРАПЕТЯН
Доцент кафедры бизнес администрирования, кандидат экономических наук, АГЭУ
Лилит ПЕТРОСЯН
Член Государственного совета по статистике РА, кандидат экономических наук

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ГРУСТНЫЙ «ПОРТРЕТ» ДЕТСКОЙ БЕДНОСТИ: БЕСКОНЕЧНЫЕ ЛИШЕНИЯ ИЛИ ПРАВО НА ДЕТСТВО МЕЧТЫ?

Детская бедность проблема вечная, на сегодняшний день ни одна страна в мире не может заявить, что решила одну из важнейших, злободневных и болезненных проблем: детскую бедность. Неоспорим тот факт, что чем безупречнее проходит детство, ребёнок рождается и развивается в благополучной среде, тем более здоровое, образованное и развитое общество получит страна, что и является важнейшей гарантией процветания экономики и национальной безопасности. В РА уровень детской бедности (нищеты) достаточно высокий и даже не обрисовываются приблизительные сроки её снижения. В последние годы к неблагополучной социально-экономической панораме Республики прибавились отрицательные последствия эпидемии COVID-19 и последней арцахской войны. По данным статистического комитета РА в 2020 году каждый третий ребёнок нашей страны бедствовал.

Статья посвящена проблеме детской бедности, причинам возникновения, методам измерения детской бедности, мерам, применяемым для снижения детской бедности в ряде зарубежных стран, анализе уровня детской бедности в Армении.

Ключевые слова: *детская бедность, депривация, крайняя нищета, жизненные условия*

Lusine KARAPETYAN
Associate Professor of the Chair of Business Administration, ASUE, PhD in Economics
Lilit PETROSYAN
Member of State Council on Statistics of the RA, PhD in Economics

SECURITY AND CHALLENGES

A SAD «PORTRAIT» OF CHILD POVERTY: ENDLESS DEPRIVATION OR THE RIGHT TO DREAM CHILDHOOD?

Child poverty is an eternal problem, nowadays no country in the world can claim to have solved one of the most important, topical and painful problems: child poverty. It is an undeniable fact that the more painless childhood is, the more complete the environment in which the child is born and develops, the healthier, more educated and developed society the country has, which is the strongest guarantee of economic prosperity and national security.

In the Republic of Armenia, the level of child poverty is quite high, and even approximate terms for its reduction are not outlined. In recent years, the negative consequences of the COVID-19 pandemic and the latest Artsakh war have been added to the unfavorable socio-economic panorama of the Republic. According to the RA Statistical Committee, in 2020, every third child in our country was in poverty.

The paper is devoted to the problem of child poverty, its causes, methods of measuring child poverty, measures taken to reduce child poverty in some foreign countries, and the analysis of the level of child poverty in Armenia.

Key words: *child poverty, deprivation, extreme poverty, living conditions*